ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ*

*Աշոտ Մարկոսյան**, Մակար Պետրոսյան****

Պարենային անվտանգության ռազմավարության հայեցակարգի ձևավորման ու կազմման հիմնական մոտեցումները և սկզբունքները

Թեև համաշխարհային տնտեսության ինտեգրման և գլոբալացման գործընթացները գերիշխում են աշխարհում, այնուհանդերձ, գրեթե բոլոր պետությունների կառավարությունները մշակում և իրականացնում են երկրի ազգային անվտանգությունների և տնտեսությունների զարգացման ազգային ռազմավարություններ, ինչպես նաև տնտեսական (այդ թվում՝ պարենային) անվտանգության ապահովման ազգային ծրագրեր: Այսպես, 2007թ. փետրվարի 7-ին ՀՀ նախագահը ստորագրեց հրամանագիր, որով հաստատվեց ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը [9], որի բաղկացուցիչ մասն է կազմում նաև տնտեսական անվտանգությունը: Նշված փաստաթղթում ամրագրված են նաև դրույթներ երկրի պարենային անվտանգությունն ապահովելու մասին: Այնուհետև հրամանագրին հաջորդեցին ոլորտային կամ ճյուղային անվտանգությունների ծրագրերի մշակման աշխատանքները, որոնցից մի քանիսը հաստատվել են բոլորովին վերջերս: ՀՀ նախագահի հանձնարարությամբ Ազգային անվտանգության խորհուրդը համապատասխան շահագրգիռ նախարարությունների և կազմակերպությունների ընդգրկմամբ մինչև 2010թ. աշունը ՀՀ նախագահի հաստատմանը պետք է ներկայացնի ՀՀ պարենային անվտանգության ռազմավարությունը:

Երրորդ հանրապետության պետականության կերտման ճանապարհին ընդունված կարևոր փաստաթղթերից մեկը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն» է, որը հավանության է արժանացել ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում և հաստատվել է ՀՀ նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով [9]: Համաձայն այդ փաստաթղթի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և

* Սկիզբը՝ նախորդ համարում

** ՀՀ կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

*** Տնտեսական գիտությունների թեկնածու:

անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Ազգային անվտանգության ապահովման գործոնների և գործողությունների ցանկում, անկախության ոլորտում, նշված են շուկայական հարաբերությունների խորացումն ու արմատավորումը, տնտեսության գիտատար, ինովացիոն, արտահանմանն ուղղված ճյուղերի խթանումը: Իսկ որպես ազատական տնտեսության նպատակներ սահմանվել են տնտեսության կայուն աճը, մանր և միջին գործարարության զարգացումը, էներգետիկ անկախությունը, գործարարության համար առավել ազատական պայմանների ստեղծումը: Ամենաընդհանուր բնութագրմամբ ազգային անվտանգությունն անձի, հասարակության և պետության պաշտպանվածության վիճակն է ներքին և արտաքին սպառնալիքներից, ինչպես նաև հնարավորությունների այն ամբողջականությունը, որն անհրաժեշտ է համակարգային զարգացում երաշխավորելու համար: Համաձայն այս սահմանման, ազգային անվտանգության հիմնական օբյեկտներն են անհատը, նրա իրավունքներն ու ազատությունները, հասարակությունը՝ նրա նյութական և հոգևոր արժեքները, պետությունը՝ նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը: Ուստի, յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության հայեցակարգը մի կողմից պետք է ներկայացնի համակարգային մոտեցումներ երկրի անվտանգ զարգացման ու ազգային նպատակների ու շահերի իրականացման վերաբերյալ, մյուս կողմից՝ մատնանշի ազգային անվտանգության սպառնալիքները, ռիսկերն ու մարտահրավերները և դրանց դիմագրավման ձևերն ու միջոցները: Նման հայեցակարգը պետք է հիմք ծառայի ազգային-պետական առաջնահերթությունների հստակեցման ու բոլոր ուղղություններով նպատակային ծրագրերի կազմման ու իրականացման համար [10, էջ 5]:

Կարճ լինելու համար ներկայացնենք միայն տնտեսական անվտանգության սահմանումը և թվարկենք դրա բաղկացուցիչները [11, էջ 36-50], որպեսզի անցնենք մեր քննարկման հիմնական թեմային՝ պարենային անվտանգությանը: Ընդունված տեսակետի համաձայն, տնտեսական անվտանգությունը երկրի այնպիսի իրավիճակ է, երբ կենսականորեն կարևոր որոշակի քանակությամբ տնտեսական ոլորտներ, որոնք երաշխավորում են ազգային շահերի իրականացումը, ապահովում են անհատի, պետության և հասարակության այնպիսի երկարատև, նպատակաուղղված և անընդհատ աճը, որի պայմաններում ազգային տնտեսության նկատմամբ սպառնալիքի ծագման հավանականությունը և դրա մասշտաբները հասցվում են նվազագույնի: Մեկ այլ տեսակետի համաձայն, տնտեսական անվտանգությունը պետության (որպես համակարգի) այն վիճակն է, երբ ձևավորվող ազգային տնտեսության համատեքստում ապահովված են անհատի, հասարակության և պետության նվազագույն տնտեսական շահերի և պահանջմունքների իրացումն ու բավա-

բարումը՝ անգամ բացասական գործոնների միաժամանակյա և միևնույն ուղղությամբ ազդեցության պայմաններում [11, էջ 84]: Երկրի տնտեսական անվտանգության ապահովման առաջնային երաշխիքն արդյունավետ տնտեսություն ունենալն է, որտեղ հասարակական արտադրությունը տնտեսական ու սոցիալական առավելագույն արդյունք է երաշխավորում նյութական ու աշխատանքային հնարավոր նվազագույն ծախսերի պայմաններում: Անցումային տնտեսությամբ երկրների տնտեսական անվտանգությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են հետևյալ հիմնական ուղղություններով. սպառող և սպասարկող երկրի վերածվելու վտանգ, նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների նվազում, մտավոր ներուժի արտահոսքի, մարդկային կապիտալի թերագնահատում և ոչ լրիվ օգտագործում, բնական ռեսուրսների անխնա և անարդյունավետ օգտագործում, ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքի տեսակարար կշռի ավելացում, զարգացած այս կամ այն երկրի կցորդ հանդիսացող տնտեսական համակարգի կարգավիճակի առկայություն, գիտական և կրթական համակարգերի կազմալուծում: Ելնելով այս առանձնահատկություններից՝ անցումային երկրների համար տնտեսական անվտանգության ցուցանիշների շեմային մակարդակ պետք է դիտել այն մակարդակները, որոնց պետք է ձգտի երկիրն առաջիկա 10-20 տարիների ընթացքում: Կայուն դինամիկայից յուրաքանչյուր շեղում պետք է դիտվի որպես երկրի տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգ: Նման պարագայում կառաջադրվի նաև տնտեսական անվտանգության կառավարման խնդիրը՝ ստեղծելով բոլոր անհրաժեշտ նախադրյալները տնտեսական զարգացման իրական արդյունքները «շեմային դաշտում» պահելու համար: Վերոթվարկյալ վտանգներն առկա են անցումային տնտեսությամբ նախկին համայնավարական երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում:

Տնտեսական անվտանգությունը ենթադրում է ապահովել երկրի ընդհանուր տնտեսական ներուժը, դրա արդյունավետ օգտագործումը, ազատ տնտեսական մրցակցության միջավայրի առկայությունը, շուկայական ենթակառուցվածքների կայացման մակարդակը, ֆինանսական համակարգի անվտանգությունը, արտաքին տնտեսական անկախությունը, պարենային անվտանգությունը, էներգետիկ ապահովությունը, բնակչության կենսամակարդակի ու կյանքի համապատասխան որակը և այլն: Որպես տնտեսական անվտանգության չափանիշներ անհրաժեշտ է հիմք ընդունել այն բնութագրիչները, որոնք ընդհանրական, ամփոփ պատկերացում են տալիս տնտեսական համակարգի մասին՝ դրա անվտանգ գործունեության երաշխիքների ապահովման առումով: Դրանց շարքին են դասվում տնտեսական ներուժը, դրա արդյունավետ օգտագործման մակարդակը, բնական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման աստիճանի համապատասխանությունը միջազգա-

յին չափանիշներին, տնտեսության մրցունակությունը, կառուցվածքային ամբողջականությունը և անկախության աստիճանը, վերարտադրության փուլերի ներդաշնակությունն ու սոցիալական կայունությունը: Երկրի տնտեսական անվտանգությունը կարող է գնահատվել միայն ցուցանիշների ամբողջական համակարգի օգնությամբ, որում ընդգրկված է նաև տնտեսական անվտանգության ինտեգրալ ցուցանիշը:

Պարենային անվտանգությունը տնտեսական անվտանգության հիմնական և կարևոր բաղկացուցիչն է: Պարենային անվտանգությունը միջնաժամկետ հեռանկարում երկրի ազգային անվտանգության ապահովման աղբյուրներից մեկն է, նրա պետականության և ինքնիշխանության պահպանման գործոնը, ժողովրդագրական քաղաքականության իրականացման կարևորագույն տարրը, անհրաժեշտ պայման իրականացնելու ազգային առաջնահերթության՝ քաղաքացիների կյանքի որակի բարձրացումը՝ կենսապահովման բարձր ստանդարտների երաշխավորման ճանապարհով: Ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում» Հայաստանի Հանրապետությունը, կարևորելով գերատեսչական-ճյուղային բարեփոխումների համալիրը, այն նպատակաուղղում է, մասնավորապես՝ բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության ապահովմանը, ներառյալ՝ գյուղատնտեսական արտադրանքի ու սննդամթերքի արտադրության ավելացմանը, ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավմանը, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովմանը, տարածքային համալիր ծրագրերի իրականացմանը, հատկապես սահմանամերձ ու լեռնային շրջանների բնակավայրերի տնտեսական ու սոցիալական զարգացմանը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ագրարային հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացմանը:

Կյանքի նոր որակի և բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման նպատակներն են՝ աղքատության հաղթահարումը, բնակչության կենսամակարդակի հարաճուն բարձրացումը, սոցիալական արդարության արմատավորումը, հասարակության բևեռացման վերացումը, գիտակրթական համակարգի արդիականացումը, կրթության մատչելիությունը, հոգևոր-մշակութային ոլորտների շարունակական զարգացումը:

Դեռևս 2002թ. մայիսի 7-ին ընդունվեց «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք), որն ուժի մեջ մտավ 2003թ. հունվարի 1-ից: Օրենքը ծավալուն չէ և բովանդակում է ընդամենը 12 հոդված: Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ոլորտի հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այդ ոլորտի կարգավորման պետական քաղաքականության

հիմնական ուղղությունները: Օրենքի հոդված 2-ի համաձայն, պարենային անվտանգության ապահովման ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- կենսապես կարևորագույն պարենային հումքի և սննդամթերքի (այսուհետ՝ սննդամթերք) տեղական արտադրության խթանումը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան սննդամթերքի որակական հատկանիշների ապահովումը,
- ՀՀ մակրոտնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը և դրա հիման վրա բնակչության գնողունակության մակարդակի բարձրացումը,
- ՀՀ պետական պահուստում պարենային պաշարների կուտակումը և դրանց արդյունավետ օգտագործումը,
- պարենային շուկայի կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքում ընդգրկված սննդամթերքի տեղական արտադրության և ներմուծման հաշվեկշռի կազմումը և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության ապահովումը:

Սննդամթերքի անհրաժեշտ և փաստացի մակարդակների յուրաքանչյուր տարվա հաշվեկշիռը կառավարությունը հաստատում է մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: *Աղյուսակներ 12 և 13-ից* կարելի է պատկերացում կազմել ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների վերաբերյալ:

Նշված օրենքի կառուցվածքը և դրանում ընդգրկված հոդվածներն ամբողջական համակարգ չեն ստեղծում երկրում պարենային անվտանգության գործընթացների կարգավորման համար: Այս փաստաթուղթն ավելի շատ հիշեցում է այն մասին, որ պետությունը մտահոգ է և պատրաստակամ զբաղվելու պարենային անվտանգության ապահովման հիմնահարցերով: Սակայն օրենքում առաջադրված մեխանիզմները և իրագործման գործիքներն անբավարար են երկրում պարենային անվտանգության բարելավման համար: Ասվածի շարունակությունն է ՀՀ նախագահի հրամանագիրը պարենային անվտանգության ռազմավարություն մշակելու վերաբերյալ: Երկրի պարենային անվտանգությունն ազգային տնտեսության այնպիսի վիճակ է, երբ ապահովվում է պարենային անկախություն, սննդամթերքի նկատմամբ երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար երաշխավորվում է ֆիզիկական և տնտեսական մատչելիություն, որոնք համապատասխանում են օրենսդրության պահանջներին և ծավալներով ավելի պակաս չեն ակտիվ և առողջ կենսակերպի համար անհրաժեշտ սննդամթերքի սպառման ռացիոնալ նորմերից:

Աղյուսակ 12/13

Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2005 և 2008թթ. [7, 8, էջ 69-70, 73]

հազ. տոննա

	Պահուստներ սկզբում տարվա	Արտադրություն	Վերադարձ	Ամբողջական դիմաշնորհավորում	Մեկնման օգտագործում	Վերամշակում	Կորուստներ	Սերմացու	Արտադրանքում	Ներքին սպառում	Պահուստներ վերջում տարվա	Զգալի	Ինքնարտադրության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով		
														կիլոգրամ	մթերք	մթերք/տարի
2005թ. միջակացություն																
Ցորեն	159.2	258.4	332.8	**750.4**	466.5	79.9	11.8	39.5	0.3	0.0	152.4	**750.4**	43.7	155.4	425.7	1362.4
Կարտոֆիլ	454.8	564.2	0.9	**1019.9**	159.6	194.6	75.5	137.8	0.3	0.0	452.1	**1019.9**	99.9	53.2	145.7	109.2
Բանջարեղեն	25.2	781.6	16.4	**823.2**	705.8	15.9	35.3	0.8	29.4	0.0	36.0	**823.2**	101.7	235.1	644.1	640.9
Միրգ (բացի խաղողից)	10.1	315.6	27.0	**352.7**	273.0	0.0	24.8	0.0	12.9	0.0	42.0	**352.7**	95.7	90.9	249.1	189.9
Հատիկաընդեղեն-նային մշակա-բույսեր	0.9	4.4	3.1	**8.4**	7.0	0.0	0.4	0.2	0.0	0.0	0.8	**8.4**	58.7	2.3	6.4	20.1
Բուսական յուղ	1.1	0.3	19.1	**20.5**	18.7	0.0	0.3	0.0	0.0	0.0	1.5	**20.5**	1.5	6.2	17.1	150.9
Շաքար	3.4	1.9	106.7	**112.0**	104.5	0.0	1.7	0.0	1.1	0.0	4.7	**112.0**	1.8	34.8	95.4	368.1
Ձու	0.4	28.5	0.2	**29.1**	25.6	0.0	1.5	1.0	0.7	0.0	0.3	**29.1**	101.8	8.5	23.4	12.4
Կաթ (բացի կարագից)	38.4	594.6	20.4	**653.4**	507.5	59.5	26.1	0.0	19.1	0.0	41.2	**653.4**	99.8	169.1	463.2	185.3
Տավարի միս	0.5	34.4	11.2	**46.1**	44.0	0.0	0.6	0.0	0.8	0.0	0.7	**46.1**	76.8	14.7	40.2	72.3
Խոզի միս	0.2	9.4	7.2	**16.8**	16.1	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.3	**16.8**	57.3	5.4	14.7	30.9
Ոչխարի և այծի միս	0.1	7.6	0.0	**7.7**	7.5	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.1	**7.7**	100.0	2.5	6.8	11.0
Հավի միս	0.2	4.6	20.0	**24.8**	24.2	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.0	**24.8**	18.7	8.1	22.1	23.6
Խաղող	6.8	164.4	3.7	**174.9**	158.9	0.0	7.9	0.0	0.7	0.0	0.0	**174.9**	98.2	3.0	8.1	5.5
Ընդամենը																**3182.6**

	Պահուստային միջոցներ սեփական	Կրեդիտորական դեբիտորական	Ներմուծում[1]	Ամբողջական դիմաց առաջացած	Հաշվեգրված օգուտներ	Ընդհանուր	Վերադարձվող	Մերժված	Արտադրություն	Հաշվեգրված մեկ օգտագործված	Պահուստային միջոցներ սեփական	Օգտագործում	Բիզնես գործունեության %	Սպառումը մեկ շնչի հաշվով		
														վիճակ/թվ	գր/օր	սեզոն/տարի
2008թ. վիճակագրություն																
Ցորեն	162.2	225.7	342.0	**729.9**	442.4	57.3	11.5	23.3	0.9	0.0	194.5	**729.9**	39.8	147.4	403.7	1292.0
Կարտոֆիլ	479.6	648.6	4.3	**1132.5**	165.0	213.8	84.2	137.2	3.6	0.0	528.7	**1132.5**	99.9	55.0	150.7	113.0
Բանջարեղեն	26.1	1007.5	22.0	**1056.5**	942.1	17.2	49.3	0.8	17.4	0.0	29.7	**1056.5**	99.5	313.8	859.8	912.1
Միրգ (բացի խաղողից)	76.5	317.8	36.7	**431.0**	294.8	0.0	35.0	0.0	14.1	0.0	87.1	**431.0**	93.4	98.2	269.0	221.9
Հատիկաընդեղ. մշակաբույսեր	3.1	6.2	4.5	**13.8**	9.5	0.0	0.6	0.2	0.0	0.0	3.5	**13.8**	57.9	3.2	8.7	27.5
Բուսական յուղ	1.9	0.4	23.3	**25.6**	23.3	0.0	0.4	0.0	0.0	0.0	1.9	**25.6**	1.7	7.8	21.3	188.0
Շաքար	4.1	3.8	108.4	**116.3**	108.5	0.0	1.7	0.0	1.2	0.0	4.9	**116.3**	3.4	36.1	99.0	382.2
Ձու	0.3	31.7	0.3	**32.3**	29.5	0.0	0.8	1.5	0.2	0.0	0.3	**32.3**	99.7	9.8	26.9	14.3
Կաթ (բացի կարագից)	72.2	661.9	20.5	**754.6**	583.2	66.2	3.1	0.0	4.0	0.0	98.1	**754.6**	97.6	194.3	532.2	212.9
Տավարի միս	0.3	49.3	19.5	**69.1**	67.1	0.0	0.8	0.0	0.9	0.0	0.3	**69.1**	72.6	22.4	61.2	110.2
Խոզի միս	0.1	7.5	16.5	**24.1**	23.7	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.1	**24.1**	31.4	7.9	21.6	45.4
Ոչխարի և այծի միս	0.0	7.4	0.0	**7.4**	7.3	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	**7.4**	100.0	2.4	6.7	10.7
Հավի միս	0.2	6.7	41.1	**48.0**	47.6	0.0	0.1	0.0	0.1	0.0	0.2	**48.0**	14.0	15.9	43.4	46.5
Խաղող	7.9	185.8	1.8	**195.5**	11.2	0.0	8.8	0.0	2.9	161.8	10.8	**195.5**	100.6	3.7	10.2	6.8
Ընդամենը																**3583.5**

[1] Առանց «ՀՀ մաքսային օրենսգրքով» թույլատրելի չափաքանակների հաշվառման:

Ուստի, յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգության ռազմավարության հայեցակարգը մի կողմից՝ պետք է ներկայացնի համակարգային մոտեցումներ երկրի պարենային անվտանգ զարգացման ու այդ ոլորտում սահմանված ազգային նպատակների ու շահերի իրականացման վերաբերյալ, մյուս կողմից՝ մատնանշի պարենային անվտանգության սպառնալիքները, ռիսկերն ու մարտահրավերները և դրանց դիմագրավման ձևերն ու միջոցները: Ընդունված է համարել, որ երկիրը բավարարում է պարենային ապահովվածության (անվտանգության) ցուցանիշը, եթե բնակչության սննդամթերքի սպառման 80%-ը կազմում են տեղական արտադրության մթերքները: Նշենք նաև, որ ԱՊՀ և ոչ մի երկիր (այդ թվում ՀՀ-ն) չի համապատասխանում այդ չափանիշին: Եթե հաշվարկների համար որպես հիմք ընդունենք տնտեսական անվտանգության շեմային ցուցանիշները, ապա ներմուծվող պարենամթերքի բաժինը երկրի ապրանքային շուկայի 25%-ը չպետք է գերազանցի, արտահանման մեջ վերամշակող արդյունաբերության արտադրանքի բաժինը չպետք է 40%-ից պակաս լինի, բարձր տեխնոլոգիաների ճյուղերի արտադրանքը թողարկվող արտադրանքի ծավալից 10-15%-ից ցածր չպետք է լինի, պետության կողմից ֆինանսավորվող գիտության ֆինանսավորման չափը ՀՆԱ 2%-ից պակաս չպետք է լինի և այլն [12, c. 68-71]: Սակայն պարենային անվտանգությունը ճիշտ չէ չափել միայն քանակական ցուցանիշների օգնությամբ: Այստեղ պետք է նկատի ունենալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են պարենամթերքի գները, դրանց նկատմամբ պահանջարկը, տեղական շուկայից ցածր արժեքով սննդամթերքի դուրսմղումը, գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքների գների միջև անհամարժեք մակարդակը, գյուղատնտեսական արտադրության համար պաշարների անբավարարությունը:

Հասկանալի է նաև, վերը թվարկված բոլոր հիմնախնդիրներն իրենք իրենց չեն լուծվում, դրանք պահանջում են իրականացնել մտածված տնտեսական քաղաքականություն և պլանավորում: Միայն փոքրաթիվ պետություններ կան, որ կարող են փաստել, որ իրենց երկրներում ապահովված է պարենային անվտանգությունը: Սակայն դրա համար այդ երկրներից պահանջվել են երկար ժամանակ և զգալի ջանքերի ու միջոցների օգտագործում: Գործնականում պարենային անվտանգության պետական ռազմավարությունը պետք է իրականացվի կոնկրետ միջոցառումների և մեխանիզմների համակարգերի միջոցով, որոնք որոշվում են քանակական և որակական ցուցանիշների և չափանիշների հիման վրա: Նման համակարգերը կազմում են պարենային քաղաքականության հիմքը և բովանդակությունը: Այս ճանապարհի առաջին քայլը կարող է լինել պարենային անվտանգության երկարաժամկետ ռազմավարության մշակումը, որպես երկրի պարենային անվտանգության ապահովման ասպարեզում պետական տնտեսական քաղաքականության նպատակնե-

րի, լուծման ենթակա հիմնախնդիրների և զարգացման հիմնական ուղղությունների ամբողջություն:

Հետազոտության օբյեկտի լիարժեքության և կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր է առանձնացնել և վերլուծել պարենային անվտանգության բնական պայմանների իրավաքաղաքական, տնտեսական ու սոցիալական նախադրյալները: Դրան զուգահեռ, ընդգրկման շրջանակներից ելնելով անհրաժեշտ է առանձնացնել պարենային անվտանգության ներպետական և արտաքին նախադրյալները: Ազդեցության բնույթից ելնելով՝ տարբերվում են նաև պարենային անվտանգության հարաբերականորեն կայուն և փոփոխուն նախադրյալները: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ մասնագիտական գրականության մեջ նման դասակարգումները հաճախ հստակ չեն առանձնացվում, որը թերացում է երկրի պարենային անվտանգության ռազմավարության ընդգրկուն հայեցակարգ մշակելու գործում:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և դրանց վերամշակման հիմնական նախադրյալը համապատասխան բնույթի հողային և ջրային ռեսուրսների, բնակլիմայական պայմանների, գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու ունակ, աշխատանքային հմտություններ և փորձ ունեցող, ռեսուրսների, գյուղատնտեսական հումքի վերամշակման կարողությունների և տեխնոլոգիաների, այդ ոլորտում կառավարման որոշակի աստիճանի առկայությունն է:

Երկրի պարենային անվտանգության իրավաքաղաքական բնույթի նախադրյալների առումով կարևոր են այն հարցերը, թե ինչպիսի քաղաքական համակարգ գոյություն ունի երկրում, ինչ սկզբունքների վրա է կառուցված պետական կառավարման մոտեցումները, որքանով են դրանք համահունչ միջազգային և համաշխարհային զարգացումների հիմնական միջոցներին և արժեհամակարգային ինչ արմատներ ունեն երկրում, ինչպես նաև առանձնակի կարևորություն են ստանում պետական համակարգի, քաղաքական ինստիտուտների կայացման և զարգացման աստիճանը: Առանձնահատուկ կարևորվում են երկրի քաղաքական կառուցակարգերի ձևավորումն ու զարգացումը, օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա քաղաքացի-պետություն հարաբերությունների հստակ սահմանումն ու երաշխավորումը, շուկայական տնտեսական հարաբերությունների ազատ ծավալման իրավական և կառուցակարգային նախադրյալների ապահովումը:

Համակարգային ընդգրկման առումով երկրի պարենային անվտանգության նախադրյալների շարքում կարևորվում են նախ՝ արտադրական հարաբերությունների բնույթը և դրա ներդաշնակությունը երկրի տնտեսական և քաղաքական համակարգին: Բանն այն է, որ ազատ տնտեսական հարաբերություններն արդյունավետ տնտեսավարման երաշխիք կարող են հանդիսանալ

միայն ժողովրդավարական պետությունում: Ժողովրդավարական արժեքների ձևախեղման պայմաններում անխուսափելի է դառնում տնտեսական և քաղաքական ներուժերի սերտաճումը, որը հանգեցնում է ստվերային տնտեսական հարաբերությունների ձևավորմանը (առաջին հերթին պարենամթերքի արտադրության և առևտրի ոլորտներում, որպես արագ և գրեթե ռիսկի աստիճան չունեցող տնտեսական գործունեության ոլորտների, քանի որ բնակչության ծախսերի մեջ ամենամեծ բաժինը կազմում են պարենային ապրանքները)[1], խեղաթյուրվում են շուկայական տնտեսական օրենքների պահանջները և լուրջ վտանգ է առաջանում երկրի պարենային, տնտեսական և ընդհանրապես ազգային անվտանգության առումով:

Երկրի պարենային անվտանգության համար անչափ կարևոր է ագրոպարենային համակարգի վերարտադրական ամբողջականության երաշխավորվածությունը, որի մեջ առանձնահատուկ դեր ունի տնտեսության և առանձնապես ագրոարդյունաբերական համակարգի արդյունավետ կառուցվածքի ձևավորումը:

Արդի աշխարհում տնտեսական զարգացման և, մասնավորապես, պարենի ծավալների ավելացման, հստակ ընդգծված երկու ուղղություններ են առանձնանում: Դրանցից առաջինը խարսխվում է հումքաէներգետիկ ռեսուրսների արդյունահանման (արտադրության) և արտահանման վրա, մյուսը՝ մարդկային ներուժի, մասնավորապես, գիտատեխնիկական նվաճումների և գործադրման ու կիրառման վրա: Նշված ուղղությունները հեռանկարային բնույթ են հաղորդում վերարտադրական ողջ համակարգի զարգացմանը և պահանջում են զարգացման ու կառավարման նոր մոտեցումների ձևավորում: Ասվածը նշանակում է, որ պարենային անվտանգության տնտեսական նախադրյալների ձևավորման խնդիրը չի կարող պայմանավորվել միայն ընթացիկ խնդիրների լուծմամբ և ունենալ նեղ մարտավարական նշանակություն: Այն ավելի շատ ռազմավարական բնույթի խնդիր է, համալիր և ամբողջական լուծում է պահանջում և պայմանավորված է երկրի հողային, ջրային և բնական այլ ռեսուրսների, արտադրատեխնիկական և գիտատեխնիկական ողջ ներուժով: Այս առումով պարենային անվտանգության նախադրյալների մեջ մեծ կարևորություն են ստանում գիտական և հատկապես տեխնիկական ներուժի օգտագործման հնարավորությունները, գիտություն-արտադրություն արդյունավետ կապի ապահովումը, գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների ներդրումը և այլն:

[1] Այսպես, 2004թ. ՀՀ-ում պարենային ապրանքների տեսակարար կշիռը մանրածախ առևտրի շրջանառության մեջ կազմել է 64.1%, 2005թ.՝ 62.9%, 2006թ.՝ 61.6%, 2007թ.՝ 61.0%, 2008թ.՝ 60.2%, իսկ մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է համապատասխանաբար՝ 789.0 մլրդ դրամ, 853.9 մլրդ դրամ, 820.8 մլրդ դրամ, 934.4 մլրդ դրամ, 1059.6 մլրդ դրամ [2, էջ 330-331]:

Պարենային անվտանգության կարևոր նախադրյալ են երկրի ֆինանսավարկային համակարգի կայունությունը, բանկային համակարգի զարգացման աստիճանը, գների կայունությունը, ոսկու-արժույթի պաշարները, ներքին և արտաքին պարտքի մակարդակը, ներդրումային հնարավորությունները և այլն:

Պարենային անվտանգության սոցիալական նախադրյալների հարցն ունի առավելապես գլոբալ նշանակություն: Ներկայումս համաշխարհային ողջ հանրույթի, ինչպես նաև առանձին պետությունների կառավարությունների կողմից խնդիր է դրված ապահովել բնակչության պահանջները գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացված սննդամթերքների նկատմամբ[1]: Օրինակ, Եվրամիության անդամ երկրներն իրենց սահմանադրական համաձայնագրի 3-րդ հոդվածում ամրագրելով Միության նպատակները՝ միաժամանակ, ընդգծել են, որ Միությունը պետք է հիմնվի Եվրոպայի հավասարակշռված տնտեսական աճի, կայուն զարգացման, սոցիալական շուկայական տնտեսության, բարձր մրցակցության և լրիվ աշխատանքային և սոցիալական առաջընթացի ու շրջակա միջավայրի պահպանության և որակի բարձրացման բարձր մակարդակի վրա:

Եվրոպական ինտեգրման ճանապարհ ընտրած և դեպի Եվրոպա կողմնորոշված երկրի համար (իսկ Հայաստանն արդեն ունի եվրոպական կողմնորոշվածություն) ակնառու է, որ ցանկացած արտադրություն ինքնանպատակ լինել չի կարող, որ տնտեսական գործունեության սոցիալական արդյունքներով է նաև պայմանավորված հասարակական արտադրության արդյունավետությունը: Համակարգային, որի կարևոր բաղկացուցիչն է պարենային անվտանգությունը, առումով տնտեսական գործունեության, առավել ևս պարենի արտադրության դեպքում, արդյունքները չեն կարող կտրված լինել դրանց սոցիալական հետևանքներից: Ողջ խնդիրն այդ միասնականության արդյունավետ մեխանիզմների ապահովումն է: Ավելորդ չէ նաև նշել, որ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակված է սոցիալական պետություն:

Ցանկացած երկրի պարենային անվտանգությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք կողմնորոշում են երկրի պարենային զարգացումը, երաշխավորում են քաղաքացիների պահանջմունքների բավարարումը պարենի նկատմամբ: Ազատական տնտեսական հարաբերություններ որդե-

[1] Բնակչության կենսամակարդակի բարձրացման ճանապարհի առաջին խոչընդոտը աղքատությունն է: Թեև վերջին 30 տարիներին աղքատության ցուցանիշը զգալիորեն նվազել է, սակայն այն մնում է համաշխարհային հիմնախնդիր: Այսպես, օրական $1.25-ից (2005թ. գնողունակության փոխարժեքով հաշվարկված) պակաս եկամուտ ունեցող մարդկանց թիվն աշխարհում 1981թ. կազմել է 1.898 մլրդ մարդ (կամ աշխարհի բնակչության 52.2%-ը), իսկ 2005թ.՝ 1.373 մլրդ մարդ (25.3%-ը): Օրական $2-ից (2005թ. գնողունակության փոխարժեքով հաշվարկված) պակաս եկամուտ ունեցողների թիվն աշխարհում 1981թ. կազմել է 2.538 մլրդ մարդ (կամ աշխարհի բնակչության 69.9%-ը), իսկ 2005թ.՝ 2.560 մլրդ մարդ (կամ ամբողջ բնակչության 47.3%-ը) [1, p. 70]:

գրած և շուկայական տնտեսության արմատավորման փուլում գտնվող երկրների համար, իսկ այդպիսին է նաև ՀՀ-ն, դրանց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում պարենային անվտանգությունը պայմանավորող այնպիսի գործոններ, որոնք իրենց բնույթով կարող են լինել՝

- աշխարհաքաղաքական՝ անբարենպաստ արտաքին տնտեսական միջավայրը (օրինակ, գյուղատնտեսական հումքի և պարենի գների բարձրացումը), տնտեսական շրջափակումը, տնտեսական ինքնուրույնության կորուստը, հարևան երկրի հետ սահմանի բացումը, տարածաշրջանային տնտեսական միությունների մեջ գտնվելը կամ ստեղծումը, միակողմանի պարենային կախվածությունն արտաքին գործոններից և այլն,
- ներքաղաքական՝ ներքին քաղաքական անկայունություն, հասարակական-տնտեսական հարաբերությունների քրեականացում, տնտեսական և քաղաքական էլիտաների միատեղում և օլիգարխիկ տնտեսության ձևավորում,
- տնտեսական հարաբերությունների բնույթով պայմանավորված՝ մենաշնորհների թելադրանք, ազատ շուկայական հարաբերությունների անհրաժեշտ և բավարար նախադրյալների բացակայություն, ֆինանսատնտեսական համակարգի անկատարություն, վարկային թանկ ռեսուրսներ, ապահովագրական ինստիտուտների բացակայություն (ՀՀ գյուղատնտեսության մեջ համարյա ամբողջությամբ բացակայում է ապահովագրությունը), բնական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ օգտագործում, տնտեսության կառուցվածքի անկատարություն և դիվերսիֆիկացման անհրաժեշտություն, փոխարժեքի այնպիսի քաղաքականության իրականացումը, որը ոչ թե խրախուսում է արտահանումը, այլ, ընդհակառակը, քաջալերում է նախ և առաջ պարենի և գյուղատնտեսական հումքի ներմուծումը,
- սոցիալական՝ բնակչության ցածր եկամուտների մակարդակը և գնողունակությունը, սոցիալական անպաշտպանվածությունը, սոցիալական բևեռացումը,
- ժողովրդագրական՝ միգրացիայի բացասական մնացորդի աճ, բնական աճի նվազում, սեռատարիքային կազմի փոփոխությունների բացասական միտումներ, բնակչության ծերացում,
- պարենային՝ սովի և թերսնման վտանգ,
- սննդամթերքից զանգվածային թունավորումների վտանգ, ներքին պարենային և գյուղատնտեսական հնարավորությունների ոչ ռացիոնալ օգտագործում, կառուցվածքային անվստահություն, կտրվածություն համաշխարհային գործընթացներից,

- բնապահպանական՝ բնության և շրջակա միջավայրի պաշտպանության հստակ քաղաքականության բացակայություն, բնական ռեսուրսների և պայմանների ոչ ռացիոնալ օգտագործում, անբավարար վերաբերմունք կենսոլորտի պահպանության խնդիրների լուծման վերաբերյալ, բնապահպանական ցածր մշակույթ և այլն:

Այս բոլոր գործոններն, իրենց ընդգրկման ու ծագման բնույթից ելնելով և ներազդեցության առանձնահատկությունները հաշվի առնելով, կարող են դասակարգվել էկզոգեն (արտաքին) և էնդոգեն (ներքին) գործոնների: Նման բաժանումը կարևորում է այդ գործոնների գնահատման և դրանց վրա ներազդման արդյունավետ գործիքների մշակման և կիրառման տեսանկյունից: Մյուս կողմից, այդ գործոններն ուղղակիորեն առնչվում են երկրի ազգային անվտանգության ներքին և արտաքին համաչափ և անհամաչափ վտանգների առկայության հետ, որոնք տարբեր իրավիճակներում կարող են ունենալ դրսևորման տարբեր բնույթ:

Երկրի պարենային անվտանգության հիմնական նպատակը բնակչության անվտանգ գյուղատնտեսական արտադրանքով, ձկնային և ջրային կենսառեսուրսներից ստացվող այլ արտադրանքով և պարենով ապահովելն է: Այդ նպատակին հասնելու երաշխիքը ներքին արտադրության կայունությունն է, ինչպես նաև անհրաժեշտ ռեզերվների և պաշարների առկայությունը:

Անկախ ներքին և արտաքին պայմանների փոփոխությունից պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրներն են.

- պարենային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների ժամանակին բացահայտումը և կանխումը, ինչպես նաև կանխատեսումը, դրանց բացասական հետևանքները նվազագույնի հասցնելը՝ քաղաքացիներին սննդամթերքով ապահովման, սննդամթերքի ռազմավարական պաշարների ձևավորման համակարգի մշտական պատրաստվածության հաշվին,
- պարենամթերքի և հումքի հայրենական արտադրության կայուն զարգացումը, որն անհրաժեշտ է երկրի պարենային անկախության ապահովման համար,
- երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար անվտանգ սննդամթերքի այնպիսի ծավալներով և տեսականիով ֆիզիկական ու տնտեսական մատչելիության ձեռքբերումը և աջակցումը, որը համապատասխանում է սննդամթերքի սպառման սահմանված ռացիոնալ նորմերին և որն անհրաժեշտ է ակտիվ և առողջ կենսակերպի համար,
- սննդամթերքի անվտանգության ապահովումը:

Պարենային անվտանգության հայեցակարգը պետք է հիմք հանդիսանա մշակելու պարենային անվտանգության ապահովման, ագրոարդյունաբերական և ձկնային տնտեսության համալիրների զարգացման ասպարեզներում նորմատիվային և իրավական ակտերը:

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» եզրափակիչ դրույթներում նշված է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղեցույց պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ներկայացնելու համար: Ռազմավարության դրույթների վերանայման հաճախականությունը պայմանավորված է երկրում, տարածաշրջանում և աշխարհում ընթացող դինամիկ գործընթացներով, իրավիճակի և քաղաքական գերակայությունների փոփոխություններով:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթները կենսագործվում են ՀՀ արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի հիման վրա, որոնք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ, 86-րդ և 89-րդ հոդվածների պահանջներից ելնելով, մշակում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ պարենային անվտանգության հայեցակարգի ձևավորման հիմքում անհրաժեշտ է դնել հետևյալ հիմնական սկզբունքները.

- պարենի արտադրության և սպառման ոլորտում համազգային, համապետական և անհատական շահերի ու նպատակների սահմանումը՝ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճ ժամանակահատվածում դրանց ներդաշնակումը,
- առավելագույն պարենամթերքի արտադրության համար պետական կարգավորման լծակների և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների երաշխավորումը,
- պարենամթերքի արտադրության զարգացման հոչակումը որպես ազգային տնտեսության զարգացման գերակա ուղղություն,
- գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության ռեսուրսային ներուժի հեռանկարային միտումով նպատակային և արդյունավետ օգտագործումը,

- ագրոարդյունաբերության արդյունավետ կառուցվածքային ու ներդրումային քաղաքականության իրականացումը,
- պարենի արտադրության և օգտագործման մարտավարական խնդիրները և լուծումները ռազմավարական մոտեցումներից բխեցնելը,
- պարենային անվտանգության հիմնախնդիրներին բազմագործոն և տարբերակային մոտեցումը,
- միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա տարբեր երկրների հետ պարենի և դրա արտադրությանն առնչվող անհրաժեշտ ռեսուրսների փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատումը,
- պարենամթերքի և գյուղատնտեսական հումքի ներմուծման և արտահանման օպտիմալ շուկաների բացահայտումը և արտաքին տնտեսական գործարքների իրականացումը,
- պարենային անվտանգության համակարգի ամբողջականության և շարունակական վերահսկելիության ապահովումը:

Պարենային անվտանգության մակարդակի գնահատման համար, օրինակ՝ ՌԴ-ում, օգտագործվում է ցուցանիշների հետևյալ համակարգը.

ա) սպառման ոլորտում.

- ըստ բնակչության առանձին խմբերի տնային տնտեսությունների կողմից տնօրինվող ռեսուրսները, 1000 բնակչի հաշվով առևտրի իրականացման և սննդի կազմակերպման համար անհրաժեշտ տարածքների ապահովվածությունը,
- բնակչության մեկ շնչի հաշվով սննդամթերքի սպառումը,
- բնակչության հասցեական օգնության ծավալները,
- մարդու սննդի օրական կալորիականությունը,
- օրվա ընթացքում մարդու կողմից սպառվող սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի, վիտամինների, մակրո և միկրոտարրերի քանակությունը,
- սննդամթերքի սպառողական գների համաթիվը (ինդեքսը),

բ) արտադրության և ազգային մրցունակության ոլորտում.

- գյուղատնտեսության և ձկան արտադրանքի, հումքի և պարենամթերքի արտադրության ծավալները,
- գյուղատնտեսության և ձկան արտադրանքի, հումքի և պարենամթերքի իրացվող արտադրանքի միավորի հաշվով արտադրողների բյուջետային աջակցությունը,

- գյուղատնտեսության մեջ օգտագործվող գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետությունը,
- առևտրի և հանրային սննդի կազմակերպությունների կողմից սննդամթերքի իրացման ծավալները,

գ) կառավարման կազմակերպման ոլորտում.

- իրավական և նորմատիվային ակտերին համապատասխան ձևավորված պարենի պետական նյութական պաշարների ծավալները,
- գյուղատնտեսական և ձկան արտադրանքի, հումքի և պարենի պաշարները [13, c. 4-5]:

Պարենային անվտանգության իրավիճակի գնահատման համար որպես չափանիշ վերցվում է հայրենական գյուղատնտեսական, ձկան արտադրանքի և պարենի տեսակարար կշիռը համապատասխան մթերքների ներքին շուկաների ապրանքային պաշարների ընդհանուր ծավալում:

Այդ նպատակով պարենի հիմնական տեսակների համար սահմանվում են շեմային մեծություններ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում ընդունվել են շեմային հետևյալ մեծությունները. ցորեն՝ 95 տոկոսից ոչ պակաս, շաքար՝ 80 տոկոսից ոչ պակաս, բուսական յուղ՝ 80 տոկոսից ոչ պակաս, միս և մսամթերքներ (մսի վերահաշվարկով)՝ 85 տոկոսից ոչ պակաս, կաթ և կաթնամթերքներ (կաթի վերահաշվարկով)՝ 10 տոկոսից ոչ պակաս, ձկան արտադրանք՝ 80 տոկոսից ոչ պակաս, կարտոֆիլ՝ 85 տոկոսից ոչ պակաս [13]:

Պարենային անվտանգության ապահովումն ուղեկցվում է նաև ռիսկերով, որոնք կարող են ծրագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում էականորեն չթուլանալ: Առավել զգալի ռիսկերը վերաբերում են հետևյալ կատեգորիաներին.

- մակրոտնտեսական ռիսկեր, որոնք պայմանավորված են հայրենական տնտեսության իրական հատվածի ներդրումային գրավչությամբ և հայրենական արտադրանքի մրցունակությամբ, ինչպես նաև տնտեսության կարևորագույն ոլորտների արտաքին տնտեսական իրավիճակից կախվածությամբ,
- տեխնոլոգիական ռիսկեր, որոնք առաջանում են զարգացած երկրներից հայրենական արտադրական բազայի տեխնոլոգիական զարգացման մակարդակի հետ մնալու պատճառով, ինչպես նաև սննդամթերքի անվտանգությանը և դրանց հետևելու հիմնական համակարգերի կազմակերպմանը ներկայացվող պահանջների տարբերություններով,
- ագրոէկոլոգիական ռիսկեր, որոնք պայմանավորված են անբարենպաստ կլիմայական փոփոխություններով, ինչպես նաև բնական և տեխնածին արտակարգ իրադրությունների հետևանքներով,

- արտաքին առևտրական ռիսկեր, որոնք պայմանավորված են արտասահմանյան երկրներում շուկայական իրավիճակի փոփոխություններով ու տատանումներով և կիրառվող աջակցության միջոցառումներով:

Վերը նշված ռիսկերի առկայությունը ձևավորում է պարենային անվտանգության վտանգները, որոնք կարող են հանգեցնել պարենային անվտանգության չափանիշի շեմային մեծությունների անցանկալի փոփոխությունների: Ռիսկերի չեզոքացումը և վերացումը կամ դրանց նվազագույնի հասցնելը հսկայածավալ աշխատանք է, որը պահանջում է ուժերի և միջոցների մոբիլիզացում: Փորձենք սխեմատիկորեն ներկայացնել, թե ինչպես է «աշխատում» պարենային անվտանգության ռազմավարությունը (տե՛ս *Գծապատկեր 1*): Ինչպես երևում է, պարենային անվտանգության ապահովումը, պարենի արտադրությունը, հարակից տնտեսության ճյուղերի զարգացումը և ռիսկերի չեզոքացումը փոխկախված և փոխադարձորեն միմյանց պայմանավորող հարաբերություններ են:

Պարենային անվտանգության հիմնահարցը հայեցակարգային առումով անհրաժեշտ է քննության առնել ոչ միայն որոշակի սկզբունքների և վտանգների հաշվառմամբ, այլև ՀՀ ազգային շահերի ապահովման լայն համատեքստում: Այդ շահերը ներառում են անհատի, հասարակության և պետության ներդաշնակ ու հավասարակշռված շահերի ամբողջականությունը՝ մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում և ազգային ինքնության ամենատարբեր դրսևորումներում: Այդ շահերն ունեն կայուն և տևական բնույթ, ընկած են երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման ու իրականացման, տարբեր ոլորտներում ազգային անվտանգության հայեցակարգերի ու ռազմավարությունների կազմման հիմքում: Հետևաբար, երկրի պարենային անվտանգության ամենակարևոր մարտահրավերն այս շահերի խելամիտ և համակարգված ներդաշնակումն է:

Պարենային անվտանգության հայեցակարգի մշակման գործում կարևոր են դառնում երկրի ներքին և արտաքին գերակայությունների հստակեցման և դրանց համարժեք՝ պարենային անվտանգության մարտահրավերների ու սպառնալիքների հաղթահարման, անվտանգության կայուն երաշխիքների ապահովման հիմնահարցերը: Այս համատեքստում մեծ նշանակություն է ստանում պարենային անվտանգության՝ ապահովման համակարգի ինքնուրույնությանը և կայունությանն ուղղված հետևյալ նախադրյալների համախումբը. ազգաբնակչության կենսագործունեության տնտեսահիրավական անհրաժեշտ պայմանների ստեղծումը, տնտեսության զարգացման ռեսուրսային ապահովվածությունը, բնակչության եկամուտների ավելացումը և կենսամակարդակի բարձրացումը:

Գծապատկեր 1

Պարենային անվտանգության ռազմավարությունը



ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա պահին անհրաժեշտ է նաև հաշվի առնել մի շարք այլ կոնկրետ և կարևոր հանգամանքներ ևս: Մասնավորապես, պարենային անվտանգության տեսանկյունից կարևոր է ինչպես տնտեսական, այնպես էլ ագրոպարենային աճի այնպիսի որակի ապահովումը, որը խարսխված է հայրենական արտադրության և գործոնների առաջադիմական և արդյունավետ կառուցվածքի վրա: Պարենային անվտանգության մարտահրավերների շարքում, հատկապես անցումային երկրների համար, կարևոր է ագրոպարենային ներուժի կանխատեսելի և ծրագրավորված զարգացման երաշխավորումը, ինչին ներկայումս ձգտում է ՀՀ կառավարությունը:

Այս ամենի հետ մեկտեղ ՀՀ-ում ստեղծվել է մի իրավիճակ, որը նախկինում նախադեպը չի ունեցել և առանձնահատուկ իմաստավորման անհրաժեշտություն ունի: Խոսքը վերաբերում է այն բանին, որ գրեթե երկրի պետական բյուջեի եկամուտներից ավելի շատ ՀՀ մասնավոր փոխանցումներ են կատարվում արտերկրից: Այսպես, ՀՀ Կենտրոնական բանկի տվյալներով՝ բանկային համակարգի միջոցով ՀՀ-ին արված ոչ առևտրային բնույթի փոխանցումները կազմել են. 2004թ.՝ $644.0 մլն, 2005թ.՝ $752.8, 2006թ.՝ $960.9, 2007թ.՝ $1319.5, 2008թ.՝ $1635.3, 2009թ. $1124.1 մլն:

Մասնավոր տրանսֆերտները 2006թ. կազմել են ՀՆԱ 11.7%-ը, 2007թ.՝ 11.5%-ը, 2008թ.՝ 11.7%-ը և 2009թ.՝ 10.7%-ը: Ըստ որում, մասնավոր տրանսֆերտների աճը 2006թ. կազմել է 33.7%, 2007թ.՝ 40.6%, 2008թ.՝ 31.6%, 2009թ.՝ 33.3%: Հանրապետության բացասական առևտրային հաշվեկշռի ֆինանսավորումը մասնավոր տրանսֆերտներով 2006թ. կազմել է 63.2%, 2007թ.՝ 50.0%, 2008թ.՝ 42.6%, իսկ 2009թ.՝ 35.7% [14, էջ 16]:

Եթե նկատի ունենանք, որ բացի բանկային փոխանցումներից զգալի միջոցներ են փոխանցվում ոչ բանկային ուղիներով, պատկերն ավելի կամբողջանա: Փոխանցված այդ գումարները հիմնականում սպառողական բնույթ ունեն (զգալի մասն օգտագործվում է սննդամթերքի ձեռքբերման համար): Ինչպե՞ս կարող է այն տնտեսական զարգացման լուրջ խթան դառնալ: Առաջին հերթին այն ազատ ձեռնարկատիրական զարգացման լուրջ ռեսուրս է: Սակայն դրա արդյունավետ գործադրումը պայմանավորված է առողջ մրցակցային միջավայրի, շուկայական գործուն ենթակառույցների և մի շարք այլ գործոնների առկայությամբ: Այդ միջոցները, տնտեսական լծակների ու մեխանիզմների բանիմաց գործադրման պայմաններում, կարող են կուտակային լուրջ դրամական ռեսուրսներ դառնալ և մեծ դերակատարում ունենալ տնտեսության դիվերսիֆիկացման գործում, այդ թվում նաև ավելացնելով սննդամթերքի հայրենական կարողությունները: Այլապես ներկայումս գտնվում ենք կախարդական շրջանում, երբ հարյուր հազարավոր հայրենակիցներ, մեկնելով արտագնա աշխատանքի, զարգացնում են այդ երկրների տնտեսությունները, վաստակած գումարներն ուղարկում են ՀՀ, որտեղ այդ միջոցների հաշվին սպառվում են սպառողական ապրանքները՝ դրանով իսկ ընդլայնելով արտերկրի շուկաները: Այս ամենի արդյունքում շրջանը փակվում է, երբ որևէ երկրից ուղարկված դրամական միջոցները նորից վերադառնում են այդ երկիր: Արդյունքում՝ ՀՀ-ն արտադրող երկրից վերածվել է սպառող երկրի, ինչի հետևանքով տարեցտարի ավելանում է առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը: Բավական է նշել, որ վերջին չորս տարիների ընթացքում ներմուծ-

ման-արտահանման հարաբերակցությունը կազմել է. 2006թ.՝ 2.19, 2007թ.՝ 2.84, 2008թ.՝ 3.84 և 2009թ.՝ 4.74: Հասկանալի է նաև, որ այս վիճակն անվերջ երկար չի կարող շարունակվել:

ՀՀ տնտեսության համար պարենային անվտանգության լուրջ փորձաքար է ստվերայնության բարձր մակարդակը: Ստվերայնությունը միայն հարկերը թաքցնելը չէ կամ համապետական ծախսերին մասնակցելուց խուսափելու երևույթը: Ստվերայնությունը լրջորեն խարխլում է դեռևս չկայացած շուկայական հարաբերությունների հիմքերը՝ անհավասար պայմաններ ստեղծելով տարբեր տնտեսավարողների միջև: Ստվերային տնտեսության (դրա զգալի մասը զբաղված է տարբեր տեսակի սննդամթերքի և խմիչքների արտադրությամբ) գոյությունը վկայում է տնտեսության և երկրի համարժեք ստվերային կառավարման իրողության մասին: Բանն այն է, որ գոյություն ունի տնտեսության ստվերայնության կրիտիկական սահման, որից այն կողմ շուկայական մեխանիզմները և օրենքները դադարում են գործել: Տարբեր գնահատումներով՝ այդ սահմանը ստվերայնության 40-50%-ն է: Նման պարագայում ձևավորվում է կորպորատիվ-ստվերային կառավարման համակարգ, որի պայմաններում անխուսափելի են դառնում տնտեսական և քաղաքական ուժերի սերտաճումը և օլիգարխիկ տնտեսության ձևավորումը: Նման տնտեսությունը հայտնվում է վերարտադրական լուրջ ճգնաժամի մեջ և կարողանում է գոյատևել միայն արտաքին գործոնների ազդեցության, այդ թվում նաև հսկայական ծավալների հասնող և մեծ արժեք ունեցող սննդամթերքի ներմուծման շնորհիվ:

Պարենային շուկայի կարևոր պայման է ազատական տնտեսական համակարգի համար բարեխիղճ մրցակցության իրական նախադրյալների ստեղծումը: Այս հանգամանքը պարենային անվտանգության ապահովման հիմնական երաշխիքներից մեկն է: Խնդիրը միայն այն չէ, թե ինչպես գնահատել մրցակցային դաշտը և ինչպես ապահովել արդյունավետ մոնիթորինգի իրականացումը: Կամ խնդիրը միայն այն չէ, թե ինչ թվով տնտեսավարող սուբյեկտներ են իրականացնում այս կամ այն գործունեությունը, այս կամ այն ապրանքատեսակի մատակարարումը ՀՀ ապրանքային շուկաներ (ակնհայտ է և հայտնի է բոլորին, որ հատկապես սննդամթերքի շուկան գերմենաշնորհացված է, երբ այս կամ այն ապրանքատեսակը ներմուծվում է 1 կամ 2 տնտեսավարող սուբյեկտների կողմից, օրինակ՝ շաքարավազը, ալյուրը, բուսական յուղը, մարգարինը և այլն): Կարևոր է նաև, թե նրանց տնտեսական վիճակը շուկայական գների վրա ինչ ազդեցություն ունի, որքանով ստվերային բնույթ ունի, տվյալ տնտեսավարող սուբյեկտը քաղաքական ներազդեցության ինչ պոտենցիալ ունի և այլն: Այս համատեքստում հարկ է նշել, որ ապրանքային

շուկաներում ամենևին էլ կարևոր չէ՝ մենաշնորհը ներկրող է, թե տեղացի արտադրող: Այդպիսի իրավիճակ շուտով կստեղծվի նաև ՀՀ-ում շաքարի շուկայում, երբ 2010թ. աշնանը Շիրակի մարզում շարք կմտնի շաքարի արտադրության գործարանը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տվյալ ձեռնարկության արտադրական նախագծային կարողությունը կազմելու է տարեկան 200,0 հազար տոննա շաքար, ապա անխուսափելի են դառնում մեծ ծավալներով շաքարի հումքի ներկրումները, ինչը, բնականաբար, կթանկացնի ներքին շուկայում շաքարի վաճառքի մանրածախ գները: Ստեղծված իրավիճակում մրցակցային միջավայր ստեղծելու համար անխուսափելի են դառնում շաքարի ներկրումները դրսից: Եթե շաքարի արտադրությունը և ներմուծումը հայտնվի 1 կամ 2 տնտեսավարողի ձեռքում, ապա այդ ապրանքային շուկայում իսպառ կբացակայի մրցակցությունը: Ուստի և այս ոլորտում առաջիկայում լուրջ անելիքներ ունի տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Մեր երկրում կառուցակարգային նախադրյալների և տնտեսական հարաբերությունների իրական պատկերի ուսումնասիրությունը վկայում է, որ այս ոլորտում բացերն ու թերությունները բավական շատ են, և առաջիկայում անհրաժեշտ է մշակել և կենսագործել դրանց հաղթահարման ուղիներն ու հնարավորությունները:

Պարենային անվտանգության ապահովման միջոցառումները

Երկրի պարենային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է ձեռնարկել մի շարք քայլեր, որոնցից են. անհրաժեշտ է մշակել հայեցակարգ և ռազմավարություն, որը երկրի կառավարության պարտականությունն է: Այդ փաստաթղթում պետք է նշվեն.

- ի՞նչ է ներկայացնում պարենային անվտանգության ապահովման ոլորտում միասնական պետական տնտեսական քաղաքականությունը,
- ինչպե՞ս է կազմակերպվում պարենային անվտանգության վիճակի և դրա ապահովման իրականացման միջոցառումների հսկողության մոնիթորինգը,
- ինչպե՞ս են ընդունվում միջոցառումները գյուղատնտեսական, ձկան արտադրանքի և պարենի հիմնական տեսակների պարենային անվտանգության շեմային մեծությունների ձեռքբերման և աջակցման միջոցառումները,
- ի՞նչ միջոցառումներ են իրականացվում արտակարգ իրավիճակների ծագման դեպքերում և ո՞վ է այն ղեկավարելու,
- ինչպե՞ս է համակարգվելու պարենային անվտանգության ապահովման ասպարեզում գործադիր մարմինների գործունեությունը:

Համապատասխան նախարարությունները և իշխանության տարածքային կառավարման մարմինները (մեզանում մարզպետարանները) միմյանց հետ համագործակցելով՝ պետք է.

- իրականացնեն (հաշվի առնելով իրենց առանձնահատկությունները) միասնական պետական տնտեսական քաղաքականություն պարենային անվտանգության ապահովման ոլորտում,
- մշակեն և ընդունեն համապատասխան նորմատիվային և իրավական ակտեր պարենային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ,
- ձևավորեն և աջակցեն ստեղծելու պարենի պաշարներ իրենց տարածքներում,
- ապահովեն պարենային անվտանգության վիճակի մոնիթորինգ տարածքներում:

Պարենային անվտանգության ռազմավարության հայեցակարգի կարևոր մասերից մեկը պետք է լինի այդ ոլորտի կարգավորման օրենսդրական և կառուցվածքային իրավիճակի ապահովման ողջ փաթեթի վերլուծությունը, բացերի և թերությունների բացահայտումը, և դրա արդյունքում կոնկրետ առաջարկությունների մշակումը և դրանց կենսագործման ուղղությունների նախանշումը: Միաժամանակ, անհրաժեշտ է ուսումնասիրել պետական կառավարման մարմինների գործառույթները ՀՀ պարենային անվտանգության ապահովման գործում, մշակել կրկնվող գործառույթների վերացման կոնկրետ առաջարկություններ և նշել այդ գործառույթների բարելավման ու համակարգված բնույթ հաղորդելու ուղղությունները: Միջազգային փորձը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ստեղծել ՀՀ վարչապետին առընթեր պարենային անվտանգության հանձնաժողով, որի կազմի մեջ տարբեր նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներից կներառվեն նաև գիտնականներ, գործարարներ, օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ: Այս մարմնի միջոցով հնարավոր կլինի համակարգել պարենային անվտանգության սպառնալիքների գնահատման, դրանց հաղթահարման, պարենային անվտանգության ապահովման նախադրյալների ստեղծման, կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների կազմակերպման և իրականացման, տարբեր նախադրյալների և պետական կառավարման տարածքային մարմինների խնդիրների ու նպատակների հստակեցման, օրենսդրական և տնտեսական կարգավորման մեխանիզմների նախապատրաստման և այլ աշխատանքները:

Սա այն հիմնական միջոցառումների լրամշակման ենթակա ոչ լրիվ ցանկն է, որը, մեր կարծիքով, պետք է սկսել իրականացնել, որպեսզի ապահովվի պարենային անվտանգությունը:

Գծապատկեր 2-ում բերված են պարենային անվտանգության ապահովման միջոցառումները և դրանք իրականացնող մարմինները:

Գծապատկեր 2

Պարենային անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները



Գտնում ենք, որ ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովմանն ուղղված պետական տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի բազմաթիվ հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, հաշվի առնելով պարենային անվտանգության ռիսկերի և սպառնալիքների առկայությունը՝ պետական տնտեսական քաղաքականությունը (որի մասն է կազմում ագրարային քաղաքականությունը) պետք է իրականացվի հետևյալ հիմնական ուղղություններով:

Բնակչության բոլոր խմբերի համար սննդամթերքի տնտեսական մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել աղքատության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումներին, առաջնահերթ կերպով աջակցել բնակչության առավել կարիքավոր խմբերին, որոնք անհրաժեշտ միջոցներ չունեն որակյալ սննդամթերքի ձեռքբերման համար, ինչպես նաև այնպիսի խմբերի սննդակարգի ապահովմանը, ինչպիսիք են հղիներն ու կերակրող մայրերը, մանկահասակ,

նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաները: Անհրաժեշտ է նաև հատուկ ուշադրություն դարձնել սոցիալական ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպություններում սննդի կազմակերպմանը:

Սննդամթերքի ֆիզիկական մատչելիությունն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել տարածաշրջանային համագործակցությունը պարենամթերքի շուկաների ինտեգրման ու պարենային ապահովվածության ոլորտներում, ավելի արդյունավետ օգտագործել առանձին տարածաշրջանների խրախուսման մեխանիզմները, որտեղ բավարար չափով չեն արտադրվում պարենային ապրանքներ կամ որոնք հայտնվել են ծայրահեղ իրավիճակում: Անհրաժեշտ է նաև ապահովել տեղափոխման (տրանսպորտի) մատչելիությունը՝ հեռավոր շրջանների բնակիչներին երաշխավորված ու հնարավորին չափ համաչափ պարենամթերքով ապահովելու համար, ինչպես նաև պայմաններ ստեղծել առևտրի օբյեկտների և հանրային սննդի տարատեսակ կազմակերպությունների ենթակառուցվածք ստեղծելու համար:

Պետական նյութական պաշարների ստեղծման (ձևավորման) նպատակով անհրաժեշտ է սահմանել համապատասխան նյութական արժեքների անվանացանկն ու դրանց կուտակման չափաբաժինները (նորմերը):

Կարևոր խնդիր է նաև պարենամթերքի՝ մարդկանց առողջության համար անվտանգության ապահովումը, որի ուղղությամբ պետք է վերահսկվի գյուղատնտեսական մթերքների, ձկնաբուծության արտադրանքի և պարենային ապրանքների (այդ թվում՝ ներմուծվող բոլոր ապրանքատեսակների) որակի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին՝ արտադրության բոլոր փուլերում, պահպանման, տեղափոխման, վերամշակման ու իրացման ընթացքում: Անհրաժեշտ է բացառել պարենամթերքի անվերահսկելի տարածումը, որը ստացվել է գենետիկորեն վերափոխված բույսերից կամ այդպիսի միկրոօրգանիզմներից:

Այս ուղղությամբ պետք է իրականացնել միջազգային չափանիշներով և պահանջներով սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող պահանջների մոտարկման աշխատանքները՝ հաշվի առնելով սննդի ոլորտում հիմնարար գիտության, հետազոտությունների արդյունքները: Անհրաժեշտ է նաև կատարելագործել սննդամթերքի անվտանգության վերահսկողության համակարգը, որտեղ պետք է ներդրվեն ժամանակակից տեխնիկական միջոցները և մեթոդական մշակումները: Գյուղատնտեսական և ձկնաբուծական արտադրանքի, հումքի ու պարենամթերքի արտադրության ոլորտում հիմնականում ուժերն անհրաժեշտ է կենտրոնացնել հետևյալ ուղղություններով տարվող աշխատանքների վրա՝

- հողի բերքատվության և բերրիության ավելացումը, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնումը՝ չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու շնորհիվ,

- ոռոգման համակարգերի վերանորոգումն ու շինարարությունը,
- անասնաբուծության արագընթաց զարգացումը,
- ջրային կենսառեսուրսների ներուժի ընդլայնումը և ավելի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ ռեսուրսների արդյունաբերական ծավալներով աճեցման համար նոր տեխնոլոգիաների կիրառումը,
- պարենամթերքի հիմնովին և համակարգված վերամշակման, ինչպես նաև գյուղատնտեսական և ձկնաբուծական արտադրանքի պահպանման և տեղափոխման նոր տեխնոլոգիաների ստեղծումը,
- ագրոարդյունաբերական և ձկնային տնտեսությունների գիտական ներուժի զարգացումը, տնտեսության հարակից ճյուղերում գիտական նոր ուղղությունների խթանումը և այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք թույլ չեն տա բարձր որակավորում ունեցող մասնագետների արտագաղթը,
- ագրոարդյունաբերական և ձկնային տնտեսությունների կառուցվածքային ու տեխնոլոգիական արդիականացման տեմպերի ուժեղացումը, բնության և բնապահպանական ներուժի վերարտադրությունը,
- ագրոարդյունաբերական և ձկնային տնտեսությունների զարգացման նորարարական մոդելի ներդրման խնդիրները լուծելու ունակություն ունեցող մասնագետների նախապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի ներդրումը, որի հիմնական նպատակը պարենային անվտանգության պահանջների բավարարումն է,
- գյուղատնտեսության և ձկնային տնտեսության, ինչպես նաև հումքի և պարենամթերքի շուկաների կարգավորման մեխանիզմների կատարելագործումը՝ գյուղատնտեսական և ձկնային տնտեսությունների ու նյութատեխնիկական ռեսուրսների շուկաներում արձագանքման արագությունը մեծացնելու և գնային անհամամասնությունները վերացնելու ուղղությամբ,
- պետական աջակցության արդյունավետության բարձրացումը, որտեղ հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձվի ապրանքարտադրողների ֆինանսական կայունության և վճարունակության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

Գյուղական տարածաշրջանների կայուն զարգացումն ապահովելու ուղղությամբ պետք է աշխատանքներ իրականացվեն հետևյալ ուղղություններով՝

- գյուղական բնակավայրերում սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը/ստեղծումը,
- գյուղերում սոցիալական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ավելացումը,

- գյուղական բնակչության գործազրկության մակարդակի և իրական եկամուտների մակարդակի մոնիթորինգի իրականացումը,
- գյուղական բնակչության զբաղվածության դիվերսիֆիկացումը:

Արտաքին տնտեսական քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է ապահովել հետևյալ գործողությունները՝

- գյուղատնտեսության և ձկնային տնտեսության, հումքի և պարենամթերքի արտահանման ու ներմուծման արդյունավետ հարաբերակցության ձևավորման նպատակով նպատակաուղղված կիրառել մաքսային-սակագնային կարգավորման միջոցները,
- գյուղատնտեսության և ձկնային տնտեսության արտադրանքի, հումքի և պարենամթերքի ներմուծման ծավալների ավելացման դեպքում, ինչպես նաև դեմպինգի իրականացման պայմաններում ու արտասահմանյան երկրներում այդպիսի արտադրանքի արտահանման սուբսիդիաների տրամադրման դեպքում, Հայաստանում ակտիվորեն կիրառել ներքին շուկայի պաշտպանության միջոցները,
- հաշվի առնելով միջազգային կանոններն ու ստանդարտները՝ կազմակերպել սանիտարական, անասնաբուժության և ֆիտոսանիտարական համակարգերի արդյունավետ աշխատանքը,
- տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների և այլ ռեսուրսների ներմուծումից տեղական ագրոարդյունաբերական ու ձկնային տնտեսության համակարգերի կախվածության հետզհետե նվազեցումը:

Կարևոր է նաև, որպեսզի արտաքին տնտեսական քաղաքականության ձևավորման ընթացքում հաշվի առնվեն պարենային անվտանգության չափորոշիչները:

Պարենային անվտանգության ապահովման մեխանիզմները պետք է սահմանվեն համապատասխան իրավական նորմատիվային ակտերով, որով նախանշվում են երկրի տնտեսության և առանձին ոլորտների գործունեության պայմանները, ապահովվում են բյուջետային ֆինանսավորման պայմանները: Պարենային անվտանգության ապահովման միջոցներն ու մեխանիզմները նպատակաուղղված են առաջին հերթին ներքին և արտաքին վտանգների հուսալի չեզոքացմանը և պետք է մշակվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պետական կանխատեսումների հետ միաժամանակ: Կառավարությունը պետք է ապահովի ռեսուրսների տարեկան պարենային հաշվեկշիռների կազմումը, ինչպես նաև գյուղատնտեսության և ձկնային տնտեսության հիմնական արտադրատեսակների, հումքի և պարենամթերքի օգտագործման կանխատեսումները:

Բնակչության բոլոր խմբերի համար սննդամթերքի մատչելիության աս-

տիճանի բարձրացման նպատակով անհրաժեշտ է որոշումներ ընդունել հետևյալ հարցերի շուրջ՝

- բնակչության այն խմբերի համար, ում եկամուտների մակարդակը թույլ չի տալիս լիարժեք սնունդ ապահովել, հասցեական օգնության մեխանիզմների ձևավորման մասին,
- սննդամթերքի, այդ թվում՝ գենետիկորեն, տեխնոլոգիապես վերափոխված մթերքի, հումքի օգտագործմամբ արտադրված, անվտանգությունն ապահովող փոխկապակցված ցուցանիշների համակարգի մշակման մասին,
- սննդամթերք արտադրող կազմակերպություններում հսկողության համակարգերին ներկայացվող միասնական պահանջների մշակման մասին, որոնք համաձայնեցված են (միասնականացված են) միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջների հետ,
- սննդի արդյունաբերության կազմակերպություններում անվտանգության վերահսկողության ամբողջական համակարգի ներդրման մասին:

Գյուղատնտեսական, ձկնային տնտեսության արտադրանքի և պարենամթերքի արտադրության ու շրջանառության ոլորտում պետք է միջոցներ իրականացվեն, որոնք նպատակաուղղված են՝

- միջճյուղային տնտեսական հարաբերությունների օպտիմալացմանը, որը կխթանի ընդլայնված վերարտադրության տեմպերի աճը, ներդրումների ներգրավումն ու նորարարությունների ներդրումը գյուղացիական և ձկնային տնտեսություններում,
- գնային իրավիճակի կայունացմանը և արտադրանքի հիմնական տեսակների ստուգված (ինդիկատիվ) գների վրա հիմնված գնագոյացման մեխանիզմների ձևավորմանը,
- վարկավորման նպաստավոր համակարգի կատարելագործմանը՝ նպատակ ունենալով ապրանքարտադրողների մեծ մասի համար ապահովել կարճաժամկետ ու ներդրումային վարկերի մատչելիությունը,
- ՀՀ որոշակի տարածաշրջաններում (որտեղ տեղի է ունենում ագրոպարենային և ձկնատնտեսական ոլորտների առաջանցիկ աճ) տնտեսական ներուժի իրացման համար պայմանների ստեղծմանը: Այս գործոնը պետք է հաշվի առնվի նաև բնակչության վերաբնակեցման ապագա ծրագրերի մշակման ընթացքում,
- գյուղատնտեսության և ձկնային տնտեսության արտադրանքի, հումքի և պարենամթերքի արտադրության, վերամշակման և իրացման ոլորտներում ինտեգրման ու կոոպերացման գործընթացների խթանմանը,
- ներքին շուկայի ենթակառուցվածքի արագընթաց զարգացմանը,
- տեխնոլոգիական արդիականացման ծրագրերի մշակմանն ու ներդրմա-

նը, նոր տեխնոլոգիաների յուրացմանը, որոնք ապահովում են գյուղատնտեսությունում, ձկնային և սննդամթերքի արտադրության ճյուղերում աշխատանքի արտադրողականության աճն ու ռեսուրսախնայողությունը,

- ընդհանուր ապրանքային շուկայի և ապրանքներ մատակարարող միասնական ցանցի ձևավորմանը, ինչը հնարավոր է կազմակերպել նաև Եվրասիական տնտեսական համագործակցության երկրների մաքսային միության շրջանակներում,
- պետական առևտրային քաղաքականության կատարելագործմանը՝ համապատասխան ապրանքատեսակների շուկայի կարգավորման միջոցով (ներառյալ՝ պետության կարիքների համար կատարվող գնումները), որը թույլ է տալիս նաև ընդլայնել տեղական արտադրանքի նկատմամբ պահանջարկը:

Օգոստոս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. World Development indicators 2009, World Bank, 2010.
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
3. Словарь современной экономической теории Макмиллана, М., ИНФРА-М, 2003.
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ.:
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2000թ.:
6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
7. Պարենային ապահովություն և աղքատություն. 2008 թվականի հունվար-դեկտեմբեր, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
8. Պարենային ապահովություն և աղքատություն. 2009 թվականի հունվար-դեկտեմբեր, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ.:
9. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, հաստատվել է ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:
10. *Հարությունյան Է.Գ.,* Տնտեսական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2008թ.:
11. *Մարկոսյան Ա.,* Տնտեսական անվտանգություն. հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005թ.:
12. Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.
13. Указ Президента РФ от 1 февраля 2010 года “Об утверждении Доктрины продовольственной безопасности Российской Федерации”, www.kremlin.ru

14. Արզումանյան Ա., Մրցունակ բիզնեսի հիմնական գծերը և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2010թ.:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

Ашот Маркосян, Макар Петросян

Резюме

Одной из важнейших задач современного государства является создание соответствующей инфраструктуры и рычагов регулирования с целью обеспечения своих граждан продуктами потребления. Исследуя тенденции развития потребительского рынка и уровень цен на основные продукты потребления, можно наиболее четко представить положение дел в конкретной стране в деле продовольственной обеспеченности как страны в целом, так и различных слоев населения.

Продовольственная обеспеченность – такое социально-экономическое состояние страны, при котором любой житель имеет возможность приобретать необходимый для обеспечения прожиточного минимума набор пищевых продуктов.

В статье обсуждаются проблемы, касающиеся характеристики продовольственной безопасности; стоимости и состава продовольственной и минимальной потребительских корзин, уровня продовольственной обеспеченности населения РА и НКР, показателей, характеризующих местное производство и степень самообеспечения важнейшими продуктами питания, включенными в национальный продовольственный баланс РА, показателей по экспорту и импорту продовольствия.